ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«--» հունիսի 2011թ. N-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 115-րդ, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշմանը համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2010 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ համաձայն N1 հավելվածի:

2. Սահմանել, որ.

2.1 սույն որոշման N1 հավելվածում նշված ընկերությունների կողմից, բացառությամբ «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի, շահութաբաժինների վճարումները Երևանի բյուջե կատարվում են եռամսյա ժամկետում (ամսական հավասար չափերով), բայց ոչ ուշ, քան մինչև 2011 թվականի հոկտեմբերի 1-ը:

2.2 «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից վճարումները Երևանի բյուջե կատարվում են համաձայն N2 հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2010 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնների չափերը հաստատելու մասին» որոշման ընդունումը պայմանավորված է Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշման կատարմամբ:

Համայնքի սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների 2010 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման համար հիմք են հանդիսացել կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև Երևանի բյուջե տարեկան շահութաբաժնի վճարման չափի առաջարկության մասին տեղեկանքներն ու զուտ շահույթի բաշխման ուղղությունների վերաբերյալ կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները:

Համայնքի սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող և գործունեություն ծավալած 64 ընկերություններից 2010 թվականի տարեկան տնտեսական գործունեության արդյունքներով շահույթով են աշխատել 54 ընկերություններ, որոնց զուտ շահույթը կազմել է 786286.0 հազ. դրամ: Մինչև երեք միլիոն դրամ զուտ շահույթ ստացած 31 կազմակերպությունների զուտ շահույթը կազմել է 27723.0 հազ. դրամ, որից շահութաբաժին չի վճարվում, իսկ երեք միլիոն դրամից ավելի զուտ շահույթ ստացած 23 կազմակերպությունների ընդհանուր զուտ շահույթը կազմում է 758563.0 հազ. դրամ, որի 20%-ը կազմում է 151712.6 հազ. դրամ, սակայն Երևանի բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների գումարը կկազմի 132376.8 հազ. դրամ, հաշվի առնելով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ կետի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետի հիմքով 4 ընկերությունների՝ «Շտապբուժօգնություն», «Թիվ 1 պոլիկլինիկա», «Կենտրոն մաքրություն» և «Շենգավիթ թաղային համայնքի «Կանաչ» ՓԲԸ-ների մոտ առկա են շահութաբաժինների վճարման սահմանափակումներ՝ զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով, ինչպես նաև հաշվի է առնվել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի առաջարկությունը «Կռունկ» ՓԲԸ-ի մասով և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարը նախատեսվել է 7000 հազ. դրամ՝ 15719.4 հազ. դրամի փոխարեն /78597*20%=15719.4 հազ. դրամ/:

Հաշվի առնելով «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական վիճակը /ֆինանսական միջոցների անբավարարվածությունը/՝ ընկերության համար շահութաբաժնի վճարման ժամկետները նախատեսվել են համաձայն ժամանակացույցի:

Այլ հիմնադրամներին հատկացումները կատարվել են հաշվի առնելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի դրույթները և կազմակերպությունների առաջարկությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2010 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնների չափերը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2010 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնների չափերը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված 1
Երևան քաղաքի ավագանու
«--------» ---------- 2011թ.
հ. ---------- Ա որոշման

Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2010 թվականի տարեկան զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը

հազ.դրամ

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	2010 թվականի տարեկան զուտ շահույթ	Համայնքի մասնակցության շահութաբաժին	Պահուստային կապիտալ	Սպառման հիմնադրամ	Այլ	Վնասների նվազեցում
1	«Երևաննախագիծ» ՓԲԸ	22500,0	4500,0	1125,0	16875,0		
2	«Քաղաքաշինություն» ՓԲԸ	4720,0	944,0			3776,0	
3	«Նոր բարեկարգում» ՓԲԸ	28823,0	5764,6			23058,4	
4	«Երքաղլույս» ՓԲԸ	96761,0	19352,2	15000,0		62408,8	
5	«Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ	1723,0		500,0	1000,0	223,0	
6	«Ջրային կառույցների» ՓԲԸ	12987,0	2597,4	10389,6			
7	«Հայ-Արտ» Մշակութային կենտրոն ՓԲԸ	926,0				926,0	
8	«Զևավորում» ՓԲԸ	1818,0		918,0			900,0
9	«Հողի և ունեցվածքի գործառնությունների» ՓԲԸ	22537,0	4507,4		13029,6	5000,0	
10	«Երևանտրանս» ՓԲԸ	138888,0	27777,6	25000,0	56110,4	30000,0	
11	«Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ	99930,0	19986,0		40000,0	39944,0	
12	«Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ	1220,0		1220,0			
13	«Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ» ՓԲԸ-ի «Նոր Արաբկիր» առողջության կենտրոն» ԴՓԲԸ	2552,0		131,0	1210,8	1210,2	
14	«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն ՓԲԸ	18453,0	3690,6	922,6	5000,0	8839,8	
15	«Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն ՓԲԸ	1490,0		420,0		1070,0	
16	«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ	103284,0	20656,8	15000,0	30000,0	37627,2	
17	«Շտապբուժօգնություն» ՓԲԸ	20126,0					20126,0
18	«Հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲԸ	1337,0		1337,0			
19	«Քաղաքային Էնդոկրին դիսպանսեր» ՓԲԸ	262,0		25,0	125,0	112,0	
20	«Թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ	4967,0		254,0			4713,0
21	«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ	49,0				49,0	
22	«Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ	57,0		57,0			
23	«Թիվ 7 պոլիկլինիկա» ՓԲԸ	106,0		106,0			
24	«Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ	3375,0	675,0	1970,0			730,0
25	«Թիվ 13 պոլիկլինիկա» ՓԲԸ	399,0		40,0		359,0	
26	«Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ	13920,0	2784,0	2088,0	4176,0	4872,0	
27	«Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ	354,0		354,0			

28	«Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ	5160,0	1032,0	500,0	2500,0	1128,0	
29	«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ	1890,0		690,0	700,0	500,0	
30	«Նորագավիթ պոլիկլինիկա» ՓԲԸ	774,0		100,0	400,0	274,0	
31	«Թիվ 5 բուժանմաս» ՓԲԸ	996,0				467,0	529,0
32	«Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ	130,0			130,0		
33	«Մաքուր Աջափնյակ» ՓԲԸ	27173,0	5435,0	8000,0	4000,0	9738,0	
34	«Աջափնյակ վերելակ» ՓԲԸ	624,0		100,0	424,0	100,0	
35	«Ալան Հովհաննես» Աջափնյակի կամերային նվագախումբ» ՓԲԸ	12,0					12,0
36	«Ավան-Կանաչապատում» ՓԲԸ	1917,0					1917,0
37	«Արաբկիր-Կամար» ՓԲԸ	5215,0	1043,0	1000,0	1500,0	1672,0	
38	«Արաբկիր համայնքի «Արաբկիր արտադրա-պարկորդական» ՓԲԸ	31,0					31,0
39	«Արաբկիր-սերվիս» ՓԲԸ	251,0					251,0
40	«Արաբկիր նախագիծ» ՓԲԸ	931,0		131,0	400,0	400,0	
41	«Դավթաշենի կանաչապատում» ՓԲԸ	4054,0	810,8	100,0	1320,0	782,2	1041,0
42	Երևանի էրեբունու համայնքի «Էրեբունու Շենքերի և Շինությունների վերանորոգում» ՓԲԸ	3372,0	674,4		1686,0	1011,6	
43	«Կենտրոն -մաքրություն» ՓԲԸ	19911,0					19911,0
44	«Կենտրոն -կանաչապատում» ՓԲԸ	15729,0	3146,0		12583		
45	«Անխափան վերելակ» ՓԲԸ	1678,0		200,0	400,0	1078,0	
46	ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿՌՈՒՆԿ» ՓԲԸ	78597,0	7000,0	11789,6	15719,4	44088,0	
47	«Նոր Նորք համայնքի կանաչապատում» ՓԲԸ	2350,0				2350,0	
48	Երևանի Նորք-Մարաշի թաղային համայնքի «Կանաչ Բաղձրունք» ՓԲԸ	450,0					450,0
49	«Նուբարաշեն» ՓԲԸ	54,0		54,0			
50	Շենգավիթ թաղային համայնքի «Կանաչ» ՓԲԸ	8081,0					8081,0
51	Շենգավիթ թաղային համայնքի «Շենգավիթ մաքրություն» ՓԲԸ	778,0		100,0	200,0	478,0	
52	«Երթաշարժ» ՓԲԸ	14,0		14,0			
53	«Քանաքեռ-Զեյթուն Բարեկարգում» ՓԲԸ	2270,0		300,0	1043,0	927,0	
54	«Քանաքեռ-Զեյթուն Սան -մաքրում» ՓԲԸ	280,0					280,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**786286,0**	**132376,8**	**99935,8**	**210532,2**	**284469,2**	**58972,0**

Հավելված 2
Երևան քաղաքի ավագանու
«--------» ---------- 2011թ.
h. ---------- Ա որոշման

«Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ կողմից 2010 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթից 2011թվականի Երևանի բյուջե շահութաբաժնի վճարման ժամանակացույց

Հ/Հ	Վճարման ամիսը	վճարման ենթակա գումարը /հազ. դրամ/
1	հունիս	3000,0
2	հուլիս	3000,0
3	օգոստոս	3000,0
4	սեպտեմբեր	3000,0
5	հոկտեմբեր	3000,0
6	նոյեմբեր	3000,0
7	դեկտեմբեր	1986,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**19986,0**